Եւ տայցի ընդ միտս իմ. « Ի՞մ արդ իմիք ցանկանայցեմ ».
Գլուխ իմ կարի է ծանրացեալ առ ի ննջել ի գիրկս ալրուք։
Եթէ զաջայ ուրուք կալայց, քրտամունք անդէն ընդ նոյն դիմոն,
Մրրրիկք յիմում բնակեն ձայնի, փայլատակունք ի շրթանցս իմ.
Նա՛, թող թէ սիրեսցեն, ամենեքին սարսեն յինէն.
Թէ բանայցեմ զգիրկս գրկմամբ, ահիւ ի ծունկս իմ անկանին։
Կեցով կեցի ես հզօր, զատեալ մեկնեալ ի մարդկանէ.
Հաճեաց թոյլ տանել ինձ զի ննջեցից ընդ քուն երկրի »։

*
* *

Եւ ամբոխ ժողովրդեանն յաղօթս կայր՝ մնացեալ ելից,
Զաչս ի բաց շրջեալ ահիւ ի լեռնէ Տեառն նախանձոտի։
Զի թէ զէտակն ամպր ի վեր ամբառնայցին, շանթք խիտ ու խիտ
Մրրկախառն ի մրայլ ծոցս ամպոց հատանէին,
Եւ լոյս հրեղէն զնոցա զաչսն հարեալ շլացութեամբ՝
Ընկաղճեալս ակնկորեալս պահէր զնոսա յերկիր անկեալս։
Նոյն ժամայն բարձունք լերինն երևէին, չէր անդ Մովսէս.
Ելաց ըզնա Իսրայէլ. և յերկիր անդր Աւետեաց
Մեծ մտայոյզ խորհրդովք խաղայր Յեսու, արժգոյն երեսք,
Զի զնա ինքն յայն բաղտ ընտրեալ էր Տէր ամենակալ։

Թարգմ. ՏԻԳՐԱՆ ԻՆՔԷՆԱՃԵԱՆ — ԱԼՖՐԷԴ ՏԸ ՎԻՆԵԻ

# ՍՐՈՎ ՈՒ ՀՐՈՎ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

## ՀԵՆՐԻԿՈՍ ՍԵՆՔԻԵՎԻՉԻ

(Շար. տես էջ 41)

Թամբ մը բերին, որուն վրայ նստեցաւ լուռ և մտածկոտ։ Միջահասակ մարդ մըն էր, լայն ուսերով, կորովի և կարշնեղ։ Գլուխը խոշոր, դէմքը պղնձագոյն, աչքերը սեւ և թաթարի աչքերու նման քիչ մ'առիշեղ։ Պեխերը գունչին երկու կողմէն խիտ փունջի ձեւով կը կախուէին։ Դէմքին վրայ նկարուած էին զօրութիւն և յանդգնութիւն։ Ունէր, եթէ կարելի է այսպէս ըսել, վանողական հակակրութիւն մը՝ որ դիմացինը կը հեռացնէր իրմէ. Աթամանի մ'իշխանական արժանապատուութեան հետ՝ թաթարի մը խորամանկութիւնը, անհենգ բարեմտութեան հետ՝ վայրագութիւն։ Թամբին վրայ նստած՝ քիչ մը հանգստանալէն վերջ, ոտք ելաւ, և առանց շնորհակալութեան խօսք մ'ըսելու, ինչպէս ամէնքը կը սպասէին, արագութեամբ գնաց դիակները դիտելու։

— Շինական, — մրմռաց ահգակալը։

Անծանօթը ուշադրութեամբ կը դիտէր սպանուածներուն դէմքերը, և գուշակած ըլլալը հասկցողի մը պէս՝ գլուխը կը տանէր ու կը բերէր։ Այսպէս դանդաղ քալելով և մէջքին վրայ զօտին փնտռելով, որուն մէջ՝ կարծես ձեռքերը կ'ուզէր խոթել, դարձաւ դէպի ահգակալը։ Երիտասարդ սպային անախորժ երեւցաւ կախաղանէ նոր ազատուող մարդու մը այս հպարտ համարձակութիւնը։

Երգիծանօք ըսաւ. — Կարծեմ աւազակներու մէջ ծանօթներ կը փնտռէիր, կամ անոնց հոգւոյն համար լիթանիա կ'ըսէիր։

digitised by A.R.A.R.@

— Սխալ չէ ըրածդ, — պատասխանեց միշտ հանդարտութեամբ անծանօթը, — իրաւցնէ ծանօթներ կը փնտռեմ։ Բայց այն վարը պառկողները աւազակներ չեն, այլ ինծի դրացի տանտիրոջ մը ծառաներն են։

— Որուն հետ կը տեսնուի թէ աղէկ չես։

— Ընդհակառակն, — քթին տակէն պատասխանեց անծանօթը։ Սակայն ներէ եթէ չյայտնեցի դեռ շնորհակալութիւնս՝ կեանքս ազատած ըլլալուդ համար։ Քու արիութիւնդ իմ անխոհեմութեանս տեղը բռնեց, որով հեռացուցի մարդիկս. իսկ իմ երախտագիտութիւնս վեհանձն և արագ օգնութեանդ հաւասար է։

Աս ըսելով ձեռքը երկնցուց։ Բայց երիտասարդ սպայն ձեռքն ընդունելէ առաջ՝ անշարժ կեցաւ։

— Ամէն բանէ առաջ — ըսաւ — կ'ուզէի գիտնալ թէ ո՞ւմ հետ է որ կը խօսիմ։ Շնորհակալութիւններու միշտ ժամանակ կայ։

— Իրաւունք ալ ունիս։ Նախ պէտք էր անունս ըսել։ Ջենոբ Աբդանք է անունս, Քիէվի գաւառին մէջ կալուածատէր, իշխան Տոմինիկոս Սաւլասքայի ղազախ բանակին մէջ գնդապետ։

— Իսկ ես Յովհան Սքշեդուցքի կը կոչուիմ, իշխան Երեմիա Վիշնովեցքիի զրահաւորաց տեղակալ։

— Հռչակաւոր պատերազմիկ մարդու մը ձեռքին տակ կը ծառայես։ Ընդունէ ուրեմն շնորհակալութիւններս և ձեռքս։

Տեղակալը այլ ևս չվարանեցաւ։ Իսկ զրահաւորները վերէն վար կը դիտէին ուրիշ զէնքի տակ ծառայող զինուորը. սակայն Սքշեդուցքի անապատ դաշտին մէջ կը գտնուէր, ուր ինչ ինչ բաներու ուշ չի դրուիր։ Բաց աստի՝ գնդապետի մը դիմաց կեցած էր, որուն անմիջապէս համոզուեցաւ՝ երբ զինուորները բերին Աբդանքին ձին, սուրը, և փղոսկրեայ գունդով գաւազանը՝ զոր կը գործածէին ղազախ գնդապետները։ Դարձեալ, Աբդանք բաւական լաւ հագուած էր և խօսակցութենէն կ'իմացուէր՝ որ կրթեալ և լաւ ընկերութեան պատկանող մէկն է։

Սքշեդուցքի զինք իրեն ընթրիքին հրաւիրեց։ Խորոված մսին հոտը կու գար, զոր ծառային մէկը կրակէն հանելով՝ պնակի մը մէջ դրաւ։ Երկու զինուորականներն սկսան ուտել, և երբ Մոլտովեան գինիի մեծափոր շիշ մը մէջտեղ դրուեցաւ, խօսակցութիւնը դեռ աւելի աշխոյժ և եռանդուն կերպ մ'առաւ։

— Աստուած տայ որ ողջ և առողջ տուն դառնանք, — ըսաւ Սքշեդուցքի։

— Ուրեմն դառնալո՞ւ էք. ուսկի՞ց կու գաք, — հարցուց Աբդանք։

— Խրիմէն։

— Ի՞նչ բանի համար գնացեր էիր հոն... Թերևս գերիներու փոխնորդութեան մը համար։

— Ոչ, գնդապետ. Խանին քով գնացեր էի։

Աբդանք ականջները սրեց։

— Եւ ինչո՞ւ համար։

— Իշխան Երեմիայի մէկ նամակը անոր յանձնելու համար։

— Ա՜հ, ուրեմն դեսպանութեամբ գնացեր էիր։ Ի՞նչ կը գրէր իշխանը։

— Այդ իմ գիտնալու բանս չէ, — պատասխանեց տեղակալը։

— Կը զարմանայի — ըսաւ գնդապետը — որ իշխանը քեզի պէս երիտասարդ մը ընտրեր է իբրև դեսպան, բայց քու պատասխանդ զարմանքս փարատեց...։ Տարիքդ պզտիկ է, սակայն միտքդ հասունցած է։

Սքշեդուցքի իրեն սրուած գովասանքէն հպարտացած, պեխերը ոլորեց։

— Իսկ դուն հոս միակ ի՞նչ գործ ունէիր — հարցուց։

— Միակ չեմ. զինուորներս քիչ մը հեռու թողուցի։ Քուտաք Կրասնոքոյի քով կ'երթամ, որուն թուղթ մը կը տանիմ աթամանէն։

— Ինչո՞ւ գետով չես երթար։

— Հրամանի մը կը հնազանդիմ։

— Զարմանք որ Աթամանը այդպիսի հրաման մը տուեր է։ Գետով գնացած ըլլայիր՝ այս չարիքը չէր հանդիպեր քեզի։

— Դաշտը հիմակ խաղաղ է. լաւ կը ճանչնամ զայն։ Ինծի հանդիպածը մարդկային չարութեան հետևանքն է։

digitised by A.R.A.R.@

— Ո՞ւր է ուրեմն վրաց յարձակողը։

— Պատմութիւնն երկայն է։ Հեռաւոր վրացի մը՝ որ իմ կալուածներս աւրեց, որդիս սպաննեց, փորձեց զիս ալ աշխարհքէս վերցնել։

— Սակայն դուն ալ սուր մը չունի՞ս։

Ապտանքի գլուխը առնելութեամբ այլայլեցաւ, աչքերը փայլատակեցին։

— Ունիմ, այո, — պատասխանեց, — և Աստուած թող վկայ ըլլայ որ իմ թշնամույս դէմ ուրիշ զէնք պիտի չգործածեմ։

Տեղակալը բան մը կ'ուզէր ըսել, երբ յանկարծ դաշտէն ձիերու ոտնաձայն մը լսուեցաւ։ Պահակ մը լուր բերաւ թէ զինուորներ են եկողները։

Իմ զինուորներս պիտի ըլլան, — ըսաւ Ապտանք։ — Թասմինայի մօտերը ձգեցի զիրենք։ Գարանի կալած չունենալով հոս իրենց սպասել խոստացայ։

Քիչ վերջը ձիերու գլուխներն երեւցան, որոնք յոգնութենէ կը հեւային. երեւցան նաև ձիաւորներուն գլուխները, որոնք ձեռքերնին աչքերնուն վրայ բռնած, ճարճատող լոյսը կը դիտէին։

— Ո՞վ էք, — հարցուց Ապտանք։

— Աստուծոյ ծառաներ, — պատասխանեցին քանի մը ձայներ մութին մէջէն։

— Այո՛, իմ կարիճներս են, — ըսաւ գնդապետ՝ Սքչեպուցքին դառնալով։ — Հո՛ս, հո՛ս։

Քանի մը անձինք ձիերէն վար իջան և կրակին մօտեցան։

— Սրընթաց եկանք, գնդապետ...։ Ի՞նչ հանդիպեցաւ, — հարցուց անոնցմէ մէկը։

— Գորան մը։ Վէտքս հոս ուրիշ չարագործներու հետ պաշարուած՝ հանգոյցը նետեց ինծի։

— Աստուած զմեզ ազատէ...։ Իսկ անոնք ո՞վ են։

Այսպէս խօսելով սպառնալից կը դիտէին Սքչեպուցքի և իրեն զինուորները։

— Բարեկամներ են, — պատասխանեց Ապտանք։ — Փա՛ռք Աստուծոյ, ողջ առողջ եմ և կրնանք անմիջապէս մեկնիլ։

— Մենք պատրաստ ենք։

Նոր եկողները ձեռքերնին սկսան տաքցնել, վասն զի գիշերը ցուրտ էր։ Քառասուն հոգի էին, հաւկիւ և աղէկ զինուած. կանոնաւոր Ղազախներուն չէին նմանիր ամենեւին։ Սքչեպուցքի զարմացաւ և քիչ մ'ալ կասկածեցաւ։ Եթէ Այթաման իրաւցնէ Ապտանքը Քուտաք կը ղրկէր, այդ անոնց ընկեր կամ ուղեկից չէր տար անոր, և ոչ իսկ անապատ դաշտը կարել անցնիլ կը հրամայէր, վասն զի Տնիեբրի թափուող գետակները անցնելու համար շատ ժամանակ պիտի կորսնցնէր։ Աւելի հաւանական էր թէ Ապտանք Քուտաք հանդիպիլ չէր ուզեր։ Գնդապետն իսկ տարօրինակ մէկը կը տեսնուէր։ Սքչեպուցքի նկատեց որ Ղազախները, իրենց սպաներուն հետ համարձակ խօսելու վարժած, պատկառանօք կը վարուէին Ապտանքի հետ, իբրև թէ Այթաման մ'ըլլար։ Մեծ ասպետ մը պէտք է որ ըլլար անշուշտ. սակայն Սքչեպուցքին ուշին զարմանք պատճառողը սա կէտն էր՝ որ լաւ ճանչնալով բոլոր Ուկրանիան, երբեք լսած չէր Ապտանքի անունը։ Անոր գլխուն վրայ ալ դրոշմուած էր այն երկաթեայ կամքը՝ որ կ'երեւնար Վիշնիովիեցքի Երեմիա իշխանին գլխուն վրայ. սակայն ինչ որ իշխանին վրայ բնական առուք մըն էր, վասն զի ազնուական ծնունդ էր, անապատ դաշտին մէջ թափառական շրջող մարդուն գլխուն վրայ արտարեւ զարմանալի բան մը կը թուէր։ Սքչեպուցքի երկայն բարակ խորհրդածելէ վերջ, ըսաւ ինքիրեն, կա՛մ փախստական մըն է սա կամ աւազակապետ մը. թէպէտ ենթադրութեանցը չէին համապատասխաներ պարագաները։

Այն միջոցին Ապտանք հրամայեց բերել իրեն ձին։

— Ճամբայ ընողն, — ըսաւ — պէտք չէ կենայ։ Ներէ որ կրկնեմ շնորհակալութիւններս կեանքս ազատելուդ համար. կը խնդրեմ Աստուծմէ որ այսպիսի ծառայութիւն մ'ալ քեզի ընելու շնորհքն ընէ ինծի։

— Չէի գիտեր թէ զո՛վ կ'ազատեմ, անոր համար երախտագիտութեան արժանի չեմ. ըսաւ տեղակալը։

— Այդ համեստութիւն է, որ արիութեանդ հաւասար է։ Խնդրեմ ընդունէ այս մատանին։

digitised by A.R.A.R.@

Արշեղուցքի քայլ մը հոսն երթալով՝ գո-ռող կերպով վերէն վար դիտեց խոստիկը:

— Տե՛ս, — ըսաւ սա հայրապետն գթոտ ձայնով մը, — այս մատանին թանկագին է ոչ ճարտարութեամբ, այլ ուրիշ յատկութեանց համար: Երիտասարդութեան ժամանակ ան-հաւատներուն ձեռքը գերի ինկայ, այս մա-տանին Ս. Երկրէն դարձող ուխտաւոր մը ինծի տուաւ: Այս մատանւոյն ակին տակը Ս. Գերեզմանին հողէն կայ քիչ մը. այսպիսի ընծայ մը չի մերժուիր: Դուն երիտասարդ ես և զինուոր, և եթէ ծերութիւնը վերջին ժամուն իրեն հանդիպելիքը չի գիտեր, ի՞նչ պէտք է ըսել երիտասարդութեան համար՝ որ այնչափ երկայն ճամբայ մ'ունի դիմացը: Այս մատանին զքեզ պիտի պաշտպանէ դժ-բաղդութեանց դէմ՝ երբ նեղ ժամերու մէջ գտնուիս...: Ես ալ քեզի կ'ըսեմ թէ այդ նեղ ժամը հեռու չէ:

Կարճ լռութիւն մը տիրեց: Միայն բոցին ճարճատիւնը և ձիերու խրխինջը կը լսուէր: Հեռաւոր եղեգնուտներէն գայլերու ոռնոցին ձայնը կու գար:

Տեղակալը՝ չուզելով տալ մատանին, համոզուած այն մարդուն խօսքերէն, որ արդէն այն միջոցին ձիուն վրայ հեծեր էր: Զինուորները բլրան ստորոտը կը սպասէին իրեն:

— Յառա՜ջ, յառա՜ջ: Իսկ դու, բարեկամ, ողջամբ մնացի՛ր, բաւ հեռուէն Արշեղուց-քին. այնպիսի ժամանակներու մէջ կ'ապրինք մենք՝ որ եղբայր եղբօր չի վստահիր. դուն չես գիտեր թէ զո՛վ ազատեցիր, վասն զի ա-նունս ծածկեցի քեզմէ:

— Ուրեմն Ալպանդքը չե՞ս:

— Այդ իմ զինանշանս է...

— Իսկ անո՞ւնդ:

— Պոհատն Զենոպիոս Խմբեղնեցքի:

Այս ըսելով՝ բլրէն վար սլացաւ, իրեն ձիաւորները ետեւէն արշաւակի գնացին: Քիչ ժամանակէն մշուշին և գիշերային մթութեան մէջ աներեւոյթ եղաւ. հեռուէն հովը դա-ղախ երգին խօսքերը բերաւ.

Ո՛վ Տէր, դուն ազատէ զերիները — Անէծի ազգի մը
ծառայութենէն:

Դուն մեզի առաջնորդէ աւելի ուրախ երկիրներ, — ուր
կը հրաւիրէ զմեզ սիրուն
արշալոյս մը, — Ուր քու սուրբ անունդ ամէն տան,
տան մէջ, տաճարի մէջ
կը պաշտուի: — Ո՛հ, սրտէ բղխած աղօթից լսէ՛ հա-
ճութեամբ, ո՛վ Տէր:

Զայները կամաց կամաց մարեցան՝ խառնուելով հովին, որ անապատ դաշտին խոտերը կը տարուբերէր:

Թրգմ. Հ. Ա. ԳՈՆՏԱՔՃԵԱՆ

Շարայարելի

# ՀԱՅ ՀԱՆԴԷՍՆԵՐ

## ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ, (թիւ 12, 1905)

Այս թիւին մէջ կ'աւարտէ *Ն. Ա. «Խոսրովիկ Թարգմանիչ»ի վրայ կատարած ուսումնասիրութիւնը: Ներկայ յօդուածովս կը շեշտէ թէ ինչպէս Մանազկերտի ժողովքին պատմութեան սկզբնական աղբիւրը «Ասկո ժողովոյ» գրութիւնը, բոլորովին տարբեր հանգամանաց մէջ կը ցուցնէ նոյն ժողովը, քան Միքայէլ ասորին: Հայ աղբիւրին տարբերութեանց ձկտումն է հակաքաղկեդոնական ցուցնել զՅովհաննէս Իմաստասէր կաթողիկոսը, որուն ժամանակ գումարուեցաւ ժողովս: Մանազկերտի ժողովը ազգային եկեղեցական պատմութեան կնճռոտ կէտերէն մէկն է. *Ն. Ա. անոր վրայ ցարդ եղած կարծիքներն ու վէճերը քննադատելէ վերջ՝ այսպէս կը պարզէ նոյն ժողովքի պատմութիւնը.

«Ը. դարուն, ինչպէս ծանօթ է, Յակոբիկ-Ասորիք կը հեռանէին Սեւերեան մոլորութենէն, հետեւաբար կը դաւանէին — թէեւ քիչ մը մեղմօրէն — Քրիստոսի մարմինն «ապականացու». մինչ Հայք ընդհակառակն կը խոստովանէին թէ Քրիստոսի մարմինն էր «անապական», որ ըստ երեւոյթին կը նմանէր Յուլիանոս Ալիկառնացւոյ մոլորութեան: Այս բառականապէս միայն տարբեր, ինչպէս պիտի տեսնենք, խոստովանութիւնն պատճառ կ'ըլլայ յուզմանց: — Բեթ-Իզրայի վանաց աւուրի կրօնաւորք Բար Հադբիշաբա (Բարշապուհ) անուն երիցէ մը Հայոց կաթողիկոսին կ'ամբաստանուին թէ Յուլիանիտ են. երբ Յովհաննէս ամբաստանութիւնս